ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2024-6-2-Ա

ք. Երևան 14.08.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի օգոստոսի 14-ի նիստում քննարկեց 2024 թվականի փետրվարի 22-ին ներկայացուցիչ Լենա Միտիչյանի կողմից ներկայացված դիմումը «Թամարա» ՍՊԸ ընկերության անունով «ԹԱՄԱՐԱ» «TAMARA» «ТАМАРА» ապրանքային նշանը կամ ֆիրմային անվանումը Հայաստանի Հանրապետությունում «պաղպաղակ, կաթնամթերք, հրուշակեղեն» ապրանքների համար 2010թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ:

Կոլեգիայի նախագահը դիմումի նախնական քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեց, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերում և հիմնավորումներում չկան բավարար տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ «ԹԱՄԱՐԱ» «TAMARA» «ТАМАРА» ապրանքային նշանը օգտագործման արդյունքում 01.10.2010 թվականի դրությամբ բավականին ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում «պաղպաղակ, կաթնամթերք, հրուշակեղեն» ապրանքների համար: Ելնելով վերը նշվածից կոլեգիան եկել է այն եզրակացության, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն «ԹԱՄԱՐԱ» «TAMARA» «ТАМАРА» ապրանքային նշանը չի կարող հանրահայտ ճանաչվել ՀՀ-ում 2010թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ «պաղպաղակ, կաթնամթերք, հրուշակեղեն» ապրանքների համար:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 26-ի N774-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 82-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում՝ միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց

Ներկայացուցիչ Լենա Միտիչյանի կողմից ներկայացված «Թամարա» ՍՊԸ ընկերության անունով «ԹԱՄԱՐԱ» «TAMARA» «ТАМАРА» ապրանքային նշանը կամ ֆիրմային

անվանումը Հայաստանի Հանրապետությունում 2010թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ «պաղպաղակ, կաթնամթերք, հրուշակեղեն» ապրանքների համար հանրահայտ ճանաչելու վերաբերյալ դիմումը մերժել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ